ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

03.09.2025 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/71-3 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «30» մարտի 2026թ.

Մեծամորի համայնքապետարանը, ի դեմս Մեծամոր համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՈՑ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս «ԳՈՑ» ՍՊԸ-ի տնօրեն Ց. Պողոսյանի, ով գործում է «ԳՈՑ» ՍՊԸ-ի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կանոնադրության և 2025թ-ի հուլիսի 22-ին կնքված համատեղ գործունեության N 037 համաձայնագրի հիման վրա (այսուհետ՝ Կապալառու) ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 03.09.2025թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/71-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը, ինչպես նաև հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 12-ի ՀՀ Կառավարության N 142–Ա որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

- Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակում նշված 6-րդ չափաբաժնի մասով աշխատանքերի կատարման ժամկետը խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «...Պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թվականի հունիսի 1-ը, համաձայն հավելված 2.1-ով ներկայացվող օրացուցային գրաֆիկի» բառերով:
- Պայմանագրի Հավելված թիվ 2.1-ով և 13.10.2025թ. կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ով ներկայացված 6-րդ չափաբաժնի մասով «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»- ի փոխարեն հիմք ընդունել և հաստատել կից Հավելված 1-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ը
- Պայմանագրի Հավելված 3-ով հաստատված վճարման ժամանակացույցը՝ 6-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև 13.10.2025թ.-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 2-ով հաստատված վճարման ժամանակացույցը՝ 6-րդ չափաբաժինների մասով փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն՝ կից ներկայացված Հավելված 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր,
Վարչական կենտրոն 4
gnumnermecamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝
-------------------------- Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԳՈՑ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ
կոնսորցիում
Ք.Արտաշատ Մարքսի 14/28
colak.79@mail.ru, artplas@inbox.ru
«Յունիբանկ» ՓԲԸ
ՀՀ 24121001069000
ՀՎՀՀ 04217762, 04225743

«ԳՈՑ» ՍՊԸ Տնօրեն՝
-------------------------- Յ. Պողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*«03» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/71-3 ծածկագրով պայմանագրի*
*«30» ապրիլ 2026թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

**ՋԱՓԱԲԱԺԻՆ 6**
**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ***

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

| *Հ/հ* | *Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին փեսակների անվանումներ* | *Աշխատանքների կատարման ժամկետը* | |
|---|---|---|---|
| | | *Սկիզբը* | *Ավարտը* |
| *1* | Շինհրապարակի կազմակերպում | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների կատարման սկզբից 10 օրացուցային օրվա ընթացքում |
| *2* | Քանդման և հողային աշխատանքներ | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների կատարման սկզբից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| *3* | Հիմքերի իրականացում | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների կատարման սկզբից 40 օրացուցային օրվա ընթացքում |
| *4* | Խողովակաշարի անցկացում | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների կատարման սկզբից 70 օրացուցային օրվա ընթացքում |
| *5* | Տեխնիկական սարքավորումների մոնտաժում | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների կատարման սկզբից 90 օրացուցային օրվա ընթացքում |
| *6* | Այլ աշխատանքներ | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների կատարման սկզբից մինչև 10.05.2026թ |
| *7* | Օբյեկտի հանձնում | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների կատարման սկզբից մինչև 01.06.2026թ. |
| ***Ընդհանուրը*** | | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | ***Աշխատանքների կատարման սկզբից մինչև 01.06..2026թ.*** |

*Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականության առնչվող բոլոր փոփոխություններն* ***անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:***
*Աշխատանքների սկիզբը համարվում է կապալառուին օբյեկտը հանձնելու վերաբերյալ գրությամբ նշված մեկնարկի օրը՝ պայմանով, որ առկա են* ***տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերը /համաձայնագրերը/ և շինարարության թույլտվությունը:***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր,
Վարչական կենտրոն 4
gnumnermecamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝
___________________________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԳՈՑ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ
կոնսորցիում
Ք.Արտաշատ Մարքսի 14/28
colak.79@mail.ru, artplas@inbox.ru
«Յունիբանկ» ՓԲԸ
ՀՀ 24121001069000
ՀՎՀՀ 04217762, 04225743

«ԳՈՑ» ՍՊԸ Տնօրեն՝
___________________________ Յ. Պողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

